*Սակայն, հիմնականում Հայաստանում ծաւալուած երկարատեւ թուրք-պարսկական պատերազմների հետեւանքով, 1604-1605 թթ. Սեֆեան Իրանի Շահ Աբբասի կողմից իրականացուած հայերի բռնագաղթը դեպի Իրանի խորքերը մեծ հարուած հասցրեց նաեւ Նախիջեւանի հայ կաթողիկէ համայնքին, որը նշանակալի կորուստներով քշուեց Արաքսից հարաւ: Նախիջեւանը եւս, ի թիւս Արեւելեան Հայաստանի այլ գաւառների մեծամասամբ դատարկուեց իր հիմնական հայ բնակչութիւնից:*

*Ճիշտ է, շուտով, շնորհիւ պապի եւ եւրոպական տէրութիւնների դեսպանների միջամտութեան, Շահը թոյլ տուեց հայ կաթոլիկ բնակչութեանը վերադառնալ իրենց մշտական բնակութեան վայրերը, սակայն արդէն յետ վերադարձաւ ու նորից բնակեցրեց իրենց թալանուած ու այրուած գիւղերը կաթոլիկ բնակչութեան փոքրաթիւ մասը: Համաձայն այդ բռնագաղթի ականատես եւ գաւառի ապագայ արքեպիսկոպոս Օգոստինոս Բաջենցի, հետ վերադառնալով, «տեսաք ամենայն ապրանքն թալանած, շատ տուն ու վանք կրակ տուած երած. դափն դարտակ ժողովուրդն մնացին Աստուծոյ փառք տալով»:*

*Արդէն համաձայն 1616 թ. Հռոմից ուղարկուած Ա. Մարիա Զիտտադինոյի կողմից կազմած զեկուցագրի Նախիջեւանի բոլոր կաթողիկէ գիւղերում միասին հաշւում է մօտ 305 կաթողիկէ ընտանիք. այդ գիւղերի ոմանցում (Քռնա, Սալթաղ, Գանձակ) հաշւում էր ընդամէնը 1, 2, 4 ընտանիք*[1]*:*

*1630-50-ական թուականներին շնորհիւ Նախիջեւանի արքեպիսկոպոս Օգոստինոս Բաջենցի կազմակերպչական ջանքերի յաջողուեց մասամբ կազմակերպել համայնքի կեանքը: Վերաշինուեցին ու նորից սկսեցին գործել որոշ գիւղերի եկեղեցիները: Հռոմի հետ գործօն կերպով քննարկւում եւ գործնական քայլեր էին ձեռնարկւում Նախիջեւանում հոգեւոր վարժարան (collegio) բացելու ուղղութեամբ: Բաջենցի անձնական ջանքերի շնորհիւ յաջողուեց հա-*

---

1 **Carlos Alonso.** *Angel Maria Cittadini, arzobispo de Naxiwan (†1629).* Roma, 1970, pp. 212-215, 231. *1617 թ. Զիտտադինոյի մէկ այլ զեկոյցում (նոյն տեղում, էջ 215-218, 232) հայ կաթողիկէների թիւը նշուած է 40470 անձ, որը սակայն ակնյայտօրէն չափազանցուած է:*